Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն ՓԲԸ
3403 ՀՀ Սյունիքի մարզ, ք.Մեղրի,
փ. Գործարարներ 42, հեռ. 0286-60685
email: meghri.hosp@gmail.com

Мегру тарацаширджанаин бжшкакан кентрон ЗАО
3403 РА Сюник марз,г.Мегри,
ул. Горцарарнер 42 тел. 0286-60685

№ 166
" 16 " հուլիսի 2024թ.

«Ագաստ» ՍՊԸ
ՀՎՀՀ 00435781
ՀՀ ք .Երևան, Տիգրան Պետրոսյան 31

Ծանուցում

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

«Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 29.01.2024թ-ին կնքված № «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-1-3» պայմանագրի շրջանակում «Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ-ի կողմից agastllc@mail.ru էլեկտրանային հասցեով շարունակաբար պատվիրվել է 06.06.2024 թվականից Սուպրաստին, Քլորոպիրամին ամպ. 1մլ-150սրվակ, 19.06.2024 թվականից Օմարենս, Տլոցին , Տամսոլ, Տուլոզին 0,4մգ դ/պ-60հաբ, որոնք մինչ օրս չեն մատակարարվել:

Համաձայն պայմանագրերի հավելված 1-երի «Ապրանքը մատակարարվում է վաճառողի կողմից ՀՀ Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարարների 42 հասցեով, գնորդի կողմից յուրաքանչյուր պատվերը ստանալուց հետո 5 օրացուցային օրվա ընթացքում»:

10.07.2024թվականի № 156 գրությամբ «Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ-ն «Ագաստ» ՍՊԸ-ին առաջարկել է մինչև 15.07.2024թ-ը ապրանքի մատակարարման նոր ժամկետ, սակայն նշված պատվերը մինչ օրս դարձյալ չի մատակարարվել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրերի 2.1.7.1 և 8.9 կետերը՝ «Մեղրու ՏԲԿ» ՓԲԸ-ն 2024թ-ի հուլիսի 17-ից միակողմանի մասնակի լուծում է 29.01.2024թ-ին կնքված N «ՄՏԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-1-3» պայմանագիրը 29,45 չափաբաժինների մասով:

« Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա)պարբերությամբ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշման 32-րդ կետի 17) ենթակետի դ. պարբերության համաձայն, եթե կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով որևէ չափաբաժնի մասով լուծվում է, ապա որակավորման և պայմանագրի ապահովումները վճարվում են միայն այդ չափաբաժնի նկատմամբ հաշվարկված գումարի չափով:

Եթե սույն ծանուցումը ստանալուց հետո 5 օրյա ժամկետում «Ագաստ» ՍՊԸ-ն վճարի պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները՝ նշված չափաբաժինների մասով, ապա չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

<< Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>>ՓԲԸ

Տնօրենի ժ/պ Հ. Հովհաննիսյան

Կատարող՝ Ա. Վարդանյան
Հեռ. 096061015